ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. փետրվարի 28-ին, ժամը 12:00-ին Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ կազմակերպում է կայծակնային շախմատի մրցաշար:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երկրորդ կարգ ունեցող շախմատիստները:
Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների: Մրցաշարում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) կայծակնային վարկանիշ:
Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև փետրվարի 25-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 70%-ը:

Մրցանակներ

Հիմնական	I	II	III	IV	V
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					
Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան աղջիկ մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10** տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10** տարեկան աղջիկ մասնակից					

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2101 և բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	4000 ՀՀ դրամ
I և II կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	5000 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Մրցաշարի մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով մինչև **փետրվարի 26-ը, 18:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հեռախոսահամար՝ **010-448479, 099-646885:**

Գրանցումը հաստատվում է վճարումը կատարելուց հետո: